

Մարզպետարանի տնօրինության տակ գտնվող տեղեկատվական համակարգերը եւ դրանց օգտագործման համառոտ նկարագրությունը

Տեղեկություն ստանալու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: "Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից" (ՀՀ Մահմանադրության 27 հոդված, մաս 2):

"Տեղեկատվության ազատության մասին" (այսուհետեւ "ՏՄ") ՀՀ օրենքի 6-րդ հոդված. "Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը":

Մարզպետարանի կողմից տրամադրվում են այն բոլոր տեղեկություններն ու տեղեկատվությունը, որոնք լիարժեքորեն արտացոլում են Լոռու մարզպետի ու մարզպետարանի գործունեությունը, մարզի զարգացման ծրագիրը և հայեցակարգը, մարզային և այլ ենթակայության կազմակերպությունների գործունեությունը և այլն:

Եթե մարմինը/կազմակերպությունը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

"ՏՄ" օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ անձինք կարող են տեղեկություն ստանալ.

- | | | |
|--|-----------------|--------------|
| 1. Պետական | կառավարման | մարմիններից |
| 2. տեղական | ինքնակառավարման | մարմիններից, |
| 3. պետական | | հիմնարկներից |
| 4. պետական եւ տեղական բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններից, | | |
| 5. հանրային նշանակության կազմակերպություններից, պաշտոնատար անձանցից: | | |

Յուրաքանչյուր մարմնում տեղեկություն տալու պարտավորությունը դրված է տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձի վրա, որն էլ եւ պարտավոր է ժամանակին ընթացք տալ տեղեկություն ստանալու հարցումներին:

Տեղեկատվությունը կարող է լինել հանրային բնույթի /ընդհանուր օգտագործման/, ինչպես նաև սահմանափակ օգտագործման, որը իր մեջ պարունակում է պետական կամ ծառայողական գաղտնիք, խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ, բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ

(բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք), խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները ("SU " օրենք, 8-րդ հոդված):

Տեղեկություն ստանալու համար պետք է դիմել տեղեկատվություն տնօրինողին գրավոր կամ բանավոր հարցումով: Որպեսզի տեղեկություն ստանալու հարցումը չմերժվի հարցմանը ներկայացվող պահանջները չբավարարելու հիմքով, կարելի է կիրառել "Ինֆորմացիայի ազատության կենտրոնի " պատրաստած հարցման նմուշը/„Դիմեք մեզ „ բաժնի „Տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի ձեւ„ ենթաբաժին/